



2014. հոկտեմբերի 10-ին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը մասնակցել է «Էրեբունի-Երևան 2796» տոնակատարությունների ծրագրով Հայաստանի ազգային պատկերասրահում մեկնարկած «Հին քաղաք, նոր հեռանկարներ» խորագրով «Երևան 2025» միջազգային կոնֆերանսին՝ հանդես գալով «Հնագիտական հուշարձանների վերականգնման և դրանց նպատակային օգտագործման նոր հնարավորությունները Էրեբունի ամրոցի օրինակով» զեկույցով:

Արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը թեմայի շրջանակում ներկայացրել է «Էրեբունի» արգելոց-թանգարանի արդիականացման ներդրումային նախագիծը, որի նպատակը, հասարակության համար հուշարձանի դերը բարձրացնելով, նրա տնտեսական բնութագրիչների բացահայտումն է՝ որոշակի եկամտաբերություն ակնկալելու հեռանկարով: Ներկայացված նախագիծը ներառում է արգելոց-թանգարանի որոշակի հատվածների, մասնավորապես, Էրեբունի միջնաբերդի վերականգնում, թանգարանի շենքի վերակառուցում, սպասարկման ենթակառուցվածքների ստեղծում, ուրարտական խոհանոցի կազմակերպում, ամֆիթատրոնի տեղադրում: Իր զեկույցում Գ. Գյուրջյանն անդրադարձել է արգելոց-թանգարանի «Պատանի հնագետ» դպրոցի ստեղծմանը՝ որպես կարևոր կրթական նախաձեռնություն և մարկետինգի գործիք: Արգելոց-թանգարանի տնօրենը կարևորել է նաև ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց համար թեքահարթակի կառուցումը՝ նշելով, որ Էրեբունի արգելոց-թանգարանն առաջիններից էր, որ կառուցեց նման թեքահարթակ: